# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 344-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԱԼՏԱ ՎԻՊ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղու արևմտյան մասում գտնվող, 06-002-0193-0006 ծածկագրից առանձնացվող, 0.002556 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի N 193-6/2 փոստային հասցե:
2. Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղու արևմտյան մասում գտնվող, 06-002-0191-0015 ծածկագրից առանձնացվող, 0.022695 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի N 191-16/2 փոստային հասցե:
3. Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղու արևելյան մասում գտնվող, 06-002-0031-0001 ծածկագրից առանձնացվող, 0.004148 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի N 31-1/2 փոստային հասցե:
4. Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղու հյուսիսային մասում գտնվող, 06-002-0006-0017 ծածկագրից առանձնացվող, 0.00238 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի N 6-49/2 փոստային հասցե:
5. Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղու հարավային մասում գտնվող, 06-002-0010-0013 ծածկագրից առանձնացվող, 0.002366 հա մակերեսով հողամասին

տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի N 10-13/2 փոստային հասցե:

6. Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղու հարավային մասում գտնվող, 06-002-0010-0014 ծածկագրից առանձնացվող, 0.003523 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի N 10-14/2 փոստային հասցե:
7. Ալավերդի քաղաքի Թբիլիսյան խճուղու հյուսիսային մասում գտնվող, 06-002-0137-0007 ծածկագրից առանձնացվող, 0.00732 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թբիլիսյան խճուղի N 137-15/2 փոստային հասցե:
8. Ալավերդի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարավային մասում գտնվող, 06-060-0210-0001 ծածկագրից առանձնացվող, 0.010004 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թբիլիսյան խճուղի, N 28 փողոց, 210-1/2 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2020թ. նոյեմբերի 03
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 343-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» որոշումը, արձագանքելով Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ կամավորական ջոկատներ ստեղծելու և հայրենիքի պաշտպանությանը զինվորագրվելու կոչին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածով ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի՝ որպես կամավոր հայրենիքի պաշտպանությանը զինվորագրվելու պատճառով, 2020 թվականի նոյեմբերի 02-ից Ալավերդի համայնքի ղեկավարի պարտականությունները դնել համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Կամոյի Վարոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. նոյեմբերի 02
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 342-Ն

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

   Օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման ծախսերի նախահաշվի (բաժին 01, խումբ 1, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262161038) հոդված 4221-ում նախատեսված գումարից 9,6 հազ. դրամը տեղափոխել հոդված 4234:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 30
ք. Ալավերդի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 341-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով ***որոշում եմ***՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի դիմակայության գործողությունների ծրագիրը (հավելված):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 30
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 340-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՄԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով ***որոշում եմ՝***

1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային դիմակայության թիմ, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման և համայնքի դիմակայության հարցերով խորհրդատվական մարմին:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի դիմակայության թիմի աշխատակարգը (հավելված 1):
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման թիմի կազմը (հավելված 2):

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 30
ք. Ալավերդի